ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 7, 1963 Общественные науки

ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՄԱՐՔՍ-ԼԵՆԻՆՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ԱՆԽՈՆՋ ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԸ

Սույն թվականի մայիսի 25-ին Հայկական ՍՍՌ ԳԱ դահլիճում տեղի ունեցավ մեծարման երեկո՝ նվիրված Հայկազ Գաբրիելի Ասլանյանի ծննդյան 60 և գիտա-մանկավարժական գործունեության 35-ամյակին։

Հայկազ Ասլանյանը Սովետական Հայաստանում փիլիսոփայական-գաղափարական ճակատի հնագույն աշխատողներից ու այդ ասպարեզի ճանաչված մարդկանցից մեկն է։ Այդ բնագավառում աշխատանքները սկսելով 1928 թվականից և հետագա տարիների իր գիտակցական ողջ կյանքը անընդմեջ նվիրելով դասախոսական ու պրոպագանդիստական, ստեղծագործական ու դիտա-կազմակերպչական գործունեությանը, նա անառարկելիորեն մեծ ավանդ է մուծել հայ աշխատավորությանն ու ինտելիգենցիային փիլիսոփայական գիտելիքներ ավանդելու, նրանց մարքսիզմ-լենինիզմի աշխարհայեցողության ոգով դաստիարակելու և փիլիսոփայության ասպարեզում գիտահետազոտական աշխատանքներ ղեկավարելու պատվավոր խնդրում։

Հայկազ Գաբրիելի Ասլանյանը ծնվել է 1903 թվականին։ Ապրելով հայ ժողովրդի համար օրհասական 1915—20-ական թվականների ժամանակներում, դառն ու ծանր են անցել նրա մանկա-պատանեկան տարիները։ Նրա ծնողները, իրենց ու իրենց զավակների կյանքը թուրքական արյունոտ յաթաղանից փրկելու համար, բազմահազար հայ ընտանիքների հետ բռնել են գաղթի ճանապարհը ու կրել հայ ժողովրդի պատմական ճակատագրին բնորոշ բազմաթիվ տառապանքներ, սով և զրկանքներ։ Փրկվելով թուրքական սրից, նրանք, սակայն, չեն կարողանում ազատվել կարիքի ու հիվանդության ճիրաններից և վաղ հասակում վախճանվում են։ Հայկազ Ասլանյանը զրկվել է հորից 1918, իսկ մորից՝ 1920 թվականին, երբ դեռևս 15—17 տարեկան էր։ Մոտ երկու տարի նա իր քրոջ հետ միասին ապրել է Էջմիածնի որբանոցում։

Վաղ հասակից է Հայկազ Ասլանյանը սկսել իր աշխատանքային գործունեությունը։ Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուն պես նա ընդունվում է կոմերիտմիության շարքերը և երիտասարդական ավյունով լծվում կոմերիտական-հասարակական աշխատանքի՝ սկզբում Էջմիածնի գավառական կոմիտեում և ապա Ապարանի շրջկոմում որպես վերջինիս պատասխանատու քարտուղար։ Այդ տարիներին արդեն, դրսևորելով իրեն որպես պարտիայի առոծին նվիրված, ակտիվ ու ընդունակ երիտասարդ, նա արժանանում է պարտիական օրգանների ուշադրությանը, և, երբ 1923 թվականին Թբիլիսիում բացվում է 26 կոմիսարների անվան Անդրկովկասյան կոմունիստական համալսարանը, նա մի խումբ շնորհալի ու խոստումնալից երիտասարդների հետ Հայաստանից գործուղվում է այդ համալսարանում սովորելու։ Հայկազ Ասլանյանի կյանքում, նրա գաղափարական դաստիարակության գործում վճռական դեր են խաղացել համալսարանում ուսանելու տարիները։ Այստեղ է, որ լայնանում ու կոփվում են նրա գիտելիքները և ձևավորվում ու դիտական տեսք է ստանում նրա աշխարհայեցողությունը։

1926 թվականին, համալսարանն ավարտելուց հետո, Հայկազ Ասլանյանն ընդունվում է նույն համալսարանի փիլիսոփայական ամբիոնին կից ասպիրանտուրան, որը հաջողությամբ վերջացնում է 1929 թվականին։ Ուսանողական և ասպիրանտական տարիների ընթացքում, ուս-

ման հետ միաժամանակ, նա հասարակագիտություն է դասավանդում Թբիլիսիի 72-րդ հայկական միջնակարգ դպրոցում և հայկական մանկավարժական տեխնիկումում։ Բարձրագույն ուսումնական հաստատություններում Հայկազ Ասլանյանը սկսում է դասավանդել 1928 թվականից սկզբում դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասընթաց կարդալով կոմհամալսարանի գիշերային բաժնում և ապա՝ Թբիլիսիի բարձրագույն այլ հաստատություններում։

1931 թվականի սեպտեմբերին, Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական կոմիտեի հրավերով, Հայկազ Ասլանյանը աշխատանքի է փոխադրվում Երևան։ Այդ ժամանակից սկսած, նա 22 տարի հաջորդաբար ղեկավարել է Երևանի, նախ, անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտի, հետո՝ Ռուսական մանկավարժական ինստիտուտի, երկար տարիներ Պետական համալսարանի և ապա նաև՝ Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտկոմին կից ռեսպուբլիկական պարտիական դպրոցի փիլիսոփայության ամբիոնները, երբեք չընդհատելով դասախոսական աշխատանքը։

Բուհերում աշխատանքի տարիներին Հայկազ Ասլանյանը, դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմից բացի, ավանդել է նաև մարքսիզմ-լենինիզմի հիմունքներ ու տրամաբանություն։ Դասախոսական աշխատանքի ընթացքում, որն այսոր էլ դեռ նա չի ընդհատել, բազմաթիվ կադրեր են ունկնդրել նրան։ Շնորհիվ մարքսիզմի փիլիսոփայության խոր և բազմակողմանի իմացության, պայծառ հիշողության, նա որպես դասախոս առանձին սեր ու հարգանք է վայելել ուսանողության և ունկնդիրների շրջանում։ Նա ջանք չի խնայել վառ ու կենդանի դարձնելու խոսքը, հետաքրքրություն ու սեր արթնացնելու ուսանողության մեջ փիլիսոփայության նկատմամբ ընդհանրապես և մարքսիզմի նկատմամբ մասնավորապես։

Կադրերի փիլիսոփայական դաստիարակության, մարքսիզմ-լենինիզմ պրոպագանդելու գործին Հայկազ Ասլանյանը ծառայել է ո՛չ միայն բանավոր, այլև գրավոր խոսքի միջոցով։ Նրա գրչին է պատկանում դիալեկտիկական մատերիալիզմի առաջին ինքնուրույն հայերեն դասագիրքը 20 հեղինակային մամուլ ծավալով, որը լույս է տեսել դեռևս 1930 թվականին։ Հետագա տարիներին նա գրել է մի շարք բրոշյուրներ և բազմաթիվ հոդվածներ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի և ռուս փիլիսոփայության պատմության արմատական հարցերի վերաբերյալ։ Նա հոդվածներ ունի նվիրված ժամանակակից բուրժուական փիլիսոփայության և սոցիոլոգիայի քննադատությանը։ Վերջին տարիներս նա մի ստվարածավալ ուսումնասիրություն է գրել նվիրված հասարակական պրոգրեսի և պատմության փիլիսոփայության վերաբերյալ ժամանակակից բուրժուական ըմբռնումների քննադատությանը, որը մոտ ժամանակներս լույս կտեսնի գիտությունների ակադեմիայի հրատարակությամբ։ Բուրժուական փիլիսոփայության քննադատությանը նվիրված նրա հոդվածները ամեն մի խորթ դաղափարախոսության նկատմամբ կոմունիստի կրքոտ սկզբունքայնության վառ օրինակ են հանդիսանում։

Հայկազ Ասլանյանը զգալի աշխատանք է կատարել մարքսիզմի կլասիկների աշխատությունները հայերեն հրատարակելու գործում։ 1948-ից մինչև 1956 թվականը ղեկավարելով ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական ֆիլիալի՝ թարգմանությունների սեկտորը, նա ամենաակտիվ մասնակցություն է ունեցել մարքսիզմի կլասիկների բազմաթիվ աշխատությունների հայերեն թարգմանությունները խմբագրելու, դրանք հարթ ու սահուն լեզվով ընթերցող մասսաներին մատուցելու կարևորագույն գործում։ Հայկազ Ասլանյանը Ադո Ադոյանի հետ միասին թարգմանել է Էնգելսի «Լյուդվիգ Ֆոյերբախը և գերմանական կլասիկ փիլիսոփայության վախճանը» աշխատությունը։ Նա հատկապես շնորհակալ գործ է կատարել Տաճատ Ալեքսանյանի հետ միասին թարգմանելով Լենինի «Փիլիսոփայական տետրերը», որը, երկար ուշացումով, միայն վերջերս հայ ընթերցողին ներկայացվեց մայրենի լեզվով։ Մարքսիստական փիլիսոփայական մտքի այդ հոյակապ կոթողի թարգմանությունը հայերեն, փիլիսոփայական շատ տերմինների բացակայության պատճառով, իրոք դժվարին խնդիր էր և պահանջում էր մասնագիտական խոր դիտելիքներ՝ Լենինի մտքերը ճշտորեն վերարտադրելու համար։ Պետք է ուրախությամբ նշել, որ այդ դժվարին ու կարևոր խնդիրը բարձր մակարդակով են կատարել նրա թարգմանիչներն ու խմբագիրները։

Հայկազ Ասլանյանը ո՛չ միայն անխոնջ փիլիսոփա-ուսուցիչ է, փիլիսոփա-հետազոտող, այլ նաև ծառայություններ ունի փիլիսոփայության բնագավառում ստեղծագործական աշխատանքները կազմակերպելու ուղղությամբ։ 1944—1948 թվականներին նա եղել է գիտությունների ակադեմիայի փիլիսոփայության նորաստեղծ սեկտորի առաջին վարիչը և որպես այդպիսին հանդիսացել է սեկտորում գիտահետազոտական աշխատանքների առաջին նախաձեռնողն ու կազմակերպիչը։ 1948—1956 թվականներին աշխատելով Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտում, նա սակայն ակտիվ կապեր է պահպանում սեկտորի կոլեկտիվի հետ և, 1956 թվականին նորից

ստանձնելով սեկտորը ղեկավարելու գործը, ան այսօր գլխավորում է նրա տարեցտարի աճող գիտական հաջողությունները։ Այսօր արդեն, 1956 թվականի համեմատությամբ, սեկտորում աշխատողների թիվը ավելի քան կրկնապատկվել է։ Նա ունի 30 գիտաշխատողներ, որոնցից 19-ը ունեն գիտական աստիճաններ ու կոչումներ, իսկ 5-ը կանգնած են գիտական աստիճան ստանալու շեմքին։ Այժմ արդեն իր կազմով, ծավալած աշխատանքների քանակով ու բովանդակությամբ փիլիսոփայության սեկտորը համազոր է մի ինստիտուտի։ Վերջին տարիներս յուրաքանչյուր տարի սեկտորը հրատարակում է մինչև 8, երբեմն ավելի անուն մենագրություններ նվիրված փիլիսոփայական գիտության ակտուալ պրոբլեմների արմատական հարցերին։ Սեկտորը կից ունի նաև իրավունքի խումբ, որն աստիճանաբար հասակ է առնում և հզորանում է։ Սեկտորն աճեցնում է նորանոր գիտական կադրեր, ընդլայնվում են գիտահետազոտական աշխատանքները և աշխատանքներ են տարվում գիտական պրոդուկցիայի որակը է՛լ ավելի բարձրացնելու ուղղությամբ։ Սեկտորում գոյություն ունի ստեղծագործական աշխատանքի համար միանգամայն նպաստավոր մթնոլորտ։ Եվ այս բոլորում Հայկազ Ասլանյանը, որպես նրա ղեկավար, ունի իր պատկառելի բաժինը։

Լինելով մարքսիստական գաղափարախոսության պրոպագանդայի ասպարեզի աննկուն մարտիկ, Հայկազ Ասլանյանը իր հասարակական ողջ գործունեության ընթացքում կանգնած է եղել և այսօր էլ կանգնած է այդ գործի ավանգարդում։ 1931 թվականից մտնելով պարտիայի շարքերը, նա միշտ հանդիսացել է Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի, Երքազկոմի, Կիրովյան, ապա Սպանդարյան շրջանային կոմիտեների արտահաստիքային դասախոսը և բազմաթիվ ելույթներ է ունեցել մեր ռեսպուբլիկայի հասարակության, շատ ու շատ հիմնարկ-ձեռնարկների կոլեկտիվների առաջ։ Հայրենական պատերազմի թեժ տարիներին, Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության ամբիոնը ղեկավարելուն և դասախոսական աշխատանքին զուգահեռ, նա բրոշյուրներ ու հոդվածներ է գրում՝ մերկացնելով հիտլերականների բարբարոսական էությունը, ծավալում է հրապարակախոսական աշխատանք, բազմաթիվ դասախոսություններ կարդում զորամասերում։ Հայաստանի կոմպարտիայի Կենտկոմի որոշմամբ այդ տարիներին նա մի որոշ ժամանակ ղեկավարել է նաև «Կոմունիստ» և «Սովետական Հայաստան» թերթերի պրոպագանդայի բաժինները, ինչպես նաև հանդիսացել է ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագրի» (հաս. գիտ.) խմբագիրը, որի հրատարակությանը նա այժմ էլ ակտիվորեն մասնակցում է, իբրև խմբագրական կոլեգիայի անդամ։

Իր երկարամյա աշխատանքի տարիներին Հայկազ Ասլանյանը նվաճել է մեր ռեսպուբլիկայի լայն հասարակության հարգանքը և մեծ հեղինակություն է վայելում։ Մեր ռեսպուբլիկայում չկա մի անկյուն, որտեղ այսօր, այս կամ այն բնագավառում, չաշխատեն նրա կադրերը։ Որպես գիտական ղեկավար, նա պատրաստել է փիլիսոփայական մի շարք որակյալ կադրեր, որոնք այժմ աշխատում են երկրի բարձրագույն ուսումնական հաստատություններում և գիտահետազոտական հիմնարկներում։ Ներկայումս նա կարդում է դիալեկտիկական և պատմական մատերիալիզմի դասընթաց ասպիրանտների և գիտաշխատողների համար, որոնք պատրաստվում են թեկնածուական մինիմումների քննության։

Գիտա-մանկավարժական գործունեության և կադրերի պատրաստման գործին մատուցած ծառայությունների համար, Հայկազ Ասլանյանը երկու անգամ (1941 և 1945 թվականներին) պարգևատրվել է Հայկական Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկայի Գերագույն սովետի պատվոգրով և ՍՍՌՄ Գերագույն սովետի կողմից՝ «1941—45 թվականների Հայրենական մեծ պատերազմում աշխատանքային արիության համար» մեդալով։ Ծննդյան 60 և գիտա-մանկավարժական գործունեության 35-ամյակի կապակցությամբ Հայկական ՍՍՌ Գերագույն սովետի որոշմամբ նրան շնորհվեց ռեսպուբլիկայի գիտության վաստակավոր գործչի կոչում։